

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԿՈՏ-ՄԱԾՁԲ-22/7>>**

ք. Հրազդան

11 փետրվարի 2022թ

ՀՀ Կոտայքի մարզպետարանը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Սայադ Սայադյանը, ՀՎՀՀ-40518322, ի դեմս տնօրեն Ս.Սայադյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 612000 (վեց հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության ամկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ք.Հրազդան, Կենտրոն
ՀՎՀՀ 03014577
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
900121120050
ՀՀ Կոտայքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Լ. Պետրոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ԱԶ Սայադ Սայադյան
ք. Հրազդան, Անդրանիկի պողոտա 18
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163158122867
ՀՎՀՀ 40518322
Տնօրեն՝ Ս. Սայադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ»

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղ դրամ»	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
1	50111130	Ներկայացված է կից ֆայլով	դրամ	612000	1	Տեխնիկական սպասարկման կայան	2022թ. ընթացքում՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած: Կատարողը ծառայությունը մատուցում է ըստ Պատվիրատուի պահանջի:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան սրվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՎՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ»

ք. Հրազդան, Կենտրոն

ՀՎՀՀ 03014577

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
 900121120050

ՀՀ Կոտայքի մարզպետարանի
 գլխավոր քարտուղար՝ Լ. Պետրոսյան

 /ստորագրություն/

Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

ԱԶ Սայադ Սայադյան

ք. Հրազդան, Անդրանիկի պողոտա 18

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Հ/Հ 163158122867

ՀՎՀՀ 40518322

Տնօրեն՝ Ս. Սայադյան

 /ստորագրություն/

Կ.Տ

(Handwritten signature)

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկական) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկական) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)			
		ՊՏՄԼԱՆԼԱՆԴ ԿՐԱՅԵՐ ՔՐԱԴՕ 2.7 I 700 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 035 LL 55 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 460 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2009թ	<<Հյունդայի Սոնատա>> 606LL60 Թողարկման տարեթիվը՝ 2010թ
1	2	3	4	5	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	ՊՏՄԼԱՆԼԱՆԴ ԿՐԱՅԵՐ ՔՐԱԴՕ 2.7 I 700 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 035 LL 55 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 460 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2009թ	<<Հյունդայի Սոնատա>> 606LL60 Թողարկման տարեթիվը՝ 2010թ
1	Բռնկման համակարգի ստուգում				
2	Կցորդման համակարգի ստուգում				
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում				
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում				
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում				
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	ՊՏՄԼԱՆԼԱՆԴ ԿՐԱՅԵՐ ՔՐԱԴՕ 2.7 I 700 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 460 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2009թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՐԻ 460 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2009թ	<<Հյունդայի Սոնատա>> 606LL60 Թողարկման տարեթիվը՝ 2010թ
	1.Շարժիչ				
6	Շարժիչի հանում և տեղադրում	100000	100000	100000	100000
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	200000	200000	200000	200000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	200000	200000	200000	200000
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	80000	80000	80000	80000
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	40000	40000	40000	30000
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	25000	25000	25000	25000
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	6000	6000	6000	6000
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	3000	3000	3000	3000
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	5000	5000	5000	5000
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	4000	4000	4000	4000
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	8000	8000	8000	8000
17	Ծնկածն լիսեռի հղկում	25000	25000	25000	25000
18	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	50000	50000	50000	50000
19	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	15000	15000	15000	10000
20	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	20000	20000	20000	15000
21	Ծնկածն լիսեռի ուղղում	30000	20000	20000	20000
22	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000	5000	5000	5000
23	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	7000	7000	7000	7000
24	Շարժիչի բլուկի փոխարինում	50000	30000	30000	30000
25	Շարժիչի գլանի փոխարինում (гидролок)	-	-	-	-
26	Մխոցի փոխարինում 1 հատ	7000	5000	5000	5000
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	15000	15000	15000

28	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	5000	5000	5000
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	25000	20000	20000	20000
30	Փոկանիվի փոխարինում	10000	7000	7000	7000
31	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	35000	-	-	28000
32	Շարժիչի շղթայի փոխարինում	25000	25000	25000	25000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10000	10000	10000	10000
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	15000	10000	10000	10000
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	-	-	-	-
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	15000	10000	10000	10000
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	20000	10000	10000	10000
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	-	-	-	-
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	-	-	-	-
40	Յուղի ծորակի փոխարինում	2000	2000	2000	2000
41	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2000	2000	2000	2000
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	7000	7000	7000
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	15000	10000	10000	10000
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	8000	8000	8000
45	Շարժիչի կափույրի փոխարինում	-	-	-	-
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	-	-	-	-
47	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	8000	8000	8000	8000
48	Մխոցային օդակների փոխարինում 1 կ-տ	25000	25000	25000	25000
49	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	-	-	-	-
50	Ատամնանիվի փոխարինում	10000	10000	10000	10000
51	Ատամնանիվի փոկի փոխարինում	15000	15000	15000	15000
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	10000	8000	8000	8000
53	Սուլխարիկ փոխարինում 1կ/տ	1000	1000	1000	1000
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	20000	20000	20000	20000
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	5000	5000	5000	5000
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	7000	6000	6000	5000
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	30000	25000	25000	25000
58	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Ձցտ) հոսանի փոխարինում	-	-	-	-
59	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	3000	3000	3000	3000
60	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5000	5000	5000	5000
61	Շարժիչի գամասեղի փոխարինում	-	-	-	-
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	-	-	-	-
63	Գլխիկի հեղույսի փոխարինում	5000	4000	4000	4000
64	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	5000	5000	5000	5000
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	25000	25000	25000	25000
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	10000	10000	10000	10000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
67	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1000	1000	1000	1000
68	Ավտոմեքենայի յուղում	5000	5000	5000	5000
69	Համակարգչային այնտորոշում, թեղուղունների վերազնայն	5000	5000	5000	5000
70	Յուղի ռադիատորի փոխարինում	15000	10000	10000	10000
71	Յուղի ռադիատորի նորոգում	-	-	-	-
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	15000	15000	15000	15000
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	10000	10000	10000	10000
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	7000	5000	5000	5000
75	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	10000	8000	8000	8000
76	Օդի գտիչի փոխարինում	2000	2000	2000	2000
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	4000	4000	4000
78	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	5000	4000	5000	4000

79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	-	-	-	-
80	Կարբյուրատորի վերանորոգում	-	-	-	-
81	Ինժեկտորի բոցամուղների փոխարինում	15000	10000	10000	10000
82	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	8000	5000	5000	5000
83	Բոցամուղի կողակցում	-	-	-	-
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկների փոխարինում	-	-	-	-
85	Բենզամուղի փոխարինում	10000	8000	8000	8000
86	Վառելիքի կոշտ մաքրման գուլիչի փոխարինում	8000	6000	6000	6000
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	8000	8000	8000
88	Բռնկման կարգավորում	15000	10000	10000	10000
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	-	-	-	-
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000	25000	25000	25000
92	Վառելիքի բաքի մաքրում	10000	8000	8000	8000
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	15000	15000	15000	15000
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	20000	20000	20000
95	Տրամյորի վերանորոգում	-	-	-	-
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10000	8000	8000	8000
97	Ջրի խողովակի, փողբակի փոխարինում	8000	7000	7000	7000
98	Բենզոլաքի բենզոմուղի ցանցի փոխարինում	9000	9000	9000	9000
99	Բենզոլաքի բենզոմուղի ցանցի մաքրում	3000	3000	3000	3000
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	10000	8000	8000	8000
101	Տվիչի փոխարինում	8000	6000	6000	6000
3. Սառեցման և արտածման համակարգ					
102	Հովհարի փոխարինում	15000	10000	10000	10000
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	5000	5000	5000
104	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	10000	10000	10000
105	Ուղիատորի նորոգում	-	-	-	-
106	Շերտափեղկի փոխարինում	-	-	-	-
107	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	-	-	-	-
108	Ընդարձակող բաքի փոխարինում	10000	8000	8000	8000
109	Ընդարձակող բաքի փողբակի փոխարինում	8000	6000	6000	6000
110	Ջրի ծորակի փոխարինում	3000	3000	3000	3000
111	Հովացման համակարգի ռետինե փողբակի փոխարինում	8000	6000	6000	6000
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	6000	6000	6000
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	45000	40000	40000	40000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	-	-	-	-
115	Վառարանի շարժիչի փոխարինում	30000	25000	25000	25000
116	Թերմոստատի փոխարինում	8000	6000	6000	6000
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	25000	20000	20000	20000
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	25000	20000	20000	20000
119	Գեներատորի փոկի փոխարինում	8000	6000	6000	6000
120	Գեներատորի փոկի ձգող հողովակի փոխարինում	10000	7000	7000	7000
121	Ջրի ռադիատորի վերանորոգում	-	-	-	-
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	8000	6000	6000	6000
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	20000	20000	20000
124	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	18000	15000	15000	15000
125	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	5000	3000	3000	3000
126	Խլարարի ներդիրի փոխարինում	6000	5000	5000	5000
127	Խլարարի կախոցի փոխարինում	4000	3000	3000	3000
128	Հովացման հեղուկի փոխարինում	5000	5000	5000	5000
4. Կցորդում և ՓՏ					
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	-	-	-	-
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	-	-	-	-
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-

134	Կցորդման փողբակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
135	Կցորդման երկժանի փոխարինում	-	-	-	-
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	-	-	-	-
137	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	-	-	-	-
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	-	-	-	-
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	-	-	-	-
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	-	-	-	-
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	-	-	-	-
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	-	-	-	-
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	-	-	-	-
144	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	-	-	-	-
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	-	-	-	-
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	-	-	-	-
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	-	-	-	-
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	-	-	-	-
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	-	-	-	-
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	-	-	-	-
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	-	-	-	-
152	Վազբաչափի շարժաբեղի փոխարինում	-	-	-	-
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	-	-	-	-
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	-	-	-	-
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	-	-	-	-
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	-	-	-	-
158	Բաշխիչ տուփի դիֆերենցիալների փոխարինում	-	-	-	-
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	-	-	-	-
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	-	-	-	-
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	-	-	-	-
162	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	-	-	-	-
163	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	-	-	-	-
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	-	-	-	-
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	-	-	-	-
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	-	-	-	-
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
169	Տվիչի փոխարինում	-	-	-	-
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	-	-	-	-
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
6. Առջևի և հետևի կամրջակներ					
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	100000	100000	100000	100000
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	40000	40000	40000	40000
174	Առջևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	40000	40000	40000	40000
175	Առջևի կամրջակի կիսասնու առանցքակալի փոխարինում	-	-	-	-
176	Առջևի կամրջակի կիսասնու առանցքակալի խտաբուկների փոխարինում	-	-	-	-
177	Կամրջակի յուղի փոխարինում	15000	10000	10000	10000
178	Առջևի կամրջակի բռնցքի գնդաձև իենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000	30000	30000	30000
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	35000	35000	35000	35000
180	Հետևի կամրջակի խտաբուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	40000	40000	40000	40000
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	55000	50000	50000	50000
182	Հետևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
183	Հետևի կամրջակի կիսասնու առանցքակալի փոխարինում	-	-	-	-
184	Հետևի կամրջակի կիսասնու առանցքակալի խտաբուկների փոխարինում	-	-	-	-

185	Հետևի կամրջակի բուռնացի գնդան հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	35000	30000	30000	30000
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	25000	25000	25000	25000
187	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	70000	65000	65000	65000
188	Կամրջակի տվիչի փոխարինում	25000	20000	20000	20000
7. Ասլոնգ					
189	Տրավերտի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000	25000	25000	25000
190	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	35000	35000	35000	35000
191	Առջևի անվակուտորի առանցքակալի փոխարինում	25000	20000	20000	20000
192	Առջևի անվակուտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	35000	30000	30000	30000
193	Հետևի անվակուտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	35000	35000	35000	35000
194	Հետևի անվակուտորի առանցքակալի փոխարինում	25000	20000	20000	20000
195	Անվակուտորի գամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	10000	8000	8000	8000
196	Չախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	-	-	-	-
197	Յնցամեղմիչի թասակի փոխարինում	-	-	-	-
198	Առջևի զսպանակի փոխարինում	15000	15000	15000	15000
199	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	25000	25000	25000
200	Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	-	-	-	-
201	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	--	-	-
202	Ներքևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	-	-	-	-
203	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	-	-	-	-
204	Հարվածիչի (քարծիկի) փոխարինում	15000	15000	15000	15000
205	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
206	Վերևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	-	-	-	-
207	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	-	-	-	-
208	Հետևի վերևի լծակի վրանի փոխարինում 1 հատ	-	-	-	-
209	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	-	-	-	-
210	Գնդե հողակապերի փոխարինում	-	-	-	-
211	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
212	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	-	-	-	-
213	Հետևի կայունարարի անվաքացքի կարգավորում	-	-	-	-
214	Հետևի կայունարարի վրանների փոխարինում	-	-	-	-
215	Կայունարարի կայունակի փոխարինում	-	-	-	-
216	Հետևի զսպանակների փոխարինում	15000	15000	15000	15000
217	Հետևի ծգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000	20000	20000	20000
218	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	--
219	Չսպանի փոխարինում	--	-	-	-
220	Չսպանի վրանների փոխարինում 1 հատ	-	-	-	-
221	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	-	-	-	-
222	Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում	15000	15000	15000	15000
223	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում 1 հատ	-	-	-	-
8. Ղեկային մեխանիզմ					
224	Ղեկայունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում	-	-	-	-
225	Ղեկայունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	-	-	-	-
226	Ղեկայունակի (USuSվՍՈ) առանցքային առնու փոխարինում	-	-	-	-
227	Ղեկայունակի(USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	-	--	-	-
228	Ղեկայունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	-	-	-	-
229	Ղեկայունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	-	-	-	-
230	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	15000	15000	15000	15000
231	Ղեկայունակի պատյանի փոխարինում	10000	10000	10000	10000
232	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	-	-	-	-
233	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրագման անուրի փոխարինում	-	-	-	-

234	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	-	-	-	-
235	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	-	-	-	-
236	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	-	-	-	-
237	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	-	-	-	-
238	ՂԿ-ի հողակալների հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
239	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	-	-	-	-
240	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, մեռառաւ, աշխատանքներ	-	-	-	-
241	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
242	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	-	-	-	-
243	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	-	-	-	-
244	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	-	-	-	-
245	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
246	Ղեկային ձողի գնդե հողակալի նորոգում	-	-	-	-
247	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
248	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	35000	30000	30000	30000
249	Ղեկային ձգածողի ծայրակայների փոխարինում	-	-	-	-
250	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	-	-	-	-
9. Արգելակային համակարգ					
251	Վակումային ուժեղարարի փոխարինում	15000	15000	15000	15000
252	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	5000	5000	5000	5000
253	Ղլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000	8000
254	Ղլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	15000	15000	15000	15000
255	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000	5000
256	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	-	-	-	-
257	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000	10000
258	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000	10000
259	Առջևի սուպպորտի վերանորոգում	-	-	-	-
260	Հետևի սուպպորտի վերանորոգում	-	-	-	-
261	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10000	10000	10000	10000
262	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	-	-	-	-
263	Արգելակային փողոկի փոխարինում	8000	8000	8000	8000
264	արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000
265	Արգելակային համակարգի օդահանում	5000	5000	5000	5000
266	սկավառակային կոճղակների փոխարինում	10000	10000	10000	10000
267	թմբուկային կոճղակների փոխարինում	10000	10000	10000	10000
268	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000	5000	5000
269	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	3000	3000	3000	3000
270	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	10000	10000	10000	10000
271	Հետևի արգելակային թմբուկա հղկում 1հատ	7000	7000	7000	7000
272	Չեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000	8000
273	Չեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	-	-	-	-
274	Չեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000	7000	7000
275	Չեռքի արգելակի ճուպանի վերանորոգում	-	-	-	-
276	Հետևի արգելակների կարգավորում	5000	5000	5000	5000
277	Արգելակային համակարգի լվացում	15000	15000	15000	15000
278	Արգելակային հեղուկի փոխարինում	10000	10000	10000	10000
10. Էլեկտրասարքավորում					
279	Պեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում	15000	10000	10000	10000
280	Պեներատորի քանոն և արատավորում, հավաքում	15000	15000	15000	15000
281	Պեներատորի ստատորի փոխարինում	10000	10000	10000	10000
282	Պեներատորի ռոտորի փոխարինում	15000	15000	15000	15000
283	Պեներատորի լիցքավորման թելեի փոխարինում	8000	7000	7000	7000

284	Գեներատորի դիողային կամրջակի փոխարինում	10000	10000	10000	10000
285	Գեներատորի առանցքակալի փոխարինում	20000	20000	20000	20000
286	Գեներատորի փոկանիվի փոխարինում	7000	5000	5000	5000
287	Մեկնարկիչի թանդում և արատավորում, հավաքում	15000	15000	15000	15000
288	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	7000	5000	5000	5000
289	Մեկնարկիչի իրանի փոխարինում	5000	5000	5000	5000
290	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	5000	5000	5000	5000
291	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	5000	5000	5000	5000
292	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	5000	5000	5000	5000
293	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	5000	5000	5000	5000
294	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	5000	5000	5000	5000
295	Ազդանշանի կարգավորում	-	-	-	-
296	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
297	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000	10000
298	Սարքերի պանելի հանում և տեղադրում	-	-	-	-
299	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ լիծաստեղծում	8000	8000	8000	8000
300	Առջևի լապտերների կարգավորում	5000	5000	5000	5000
301	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000
302	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	-	-	-	-
303	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	15000	15000	15000	15000
304	Վազքաչափի փոխարինում	10000	10000	10000	10000
305	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	15000	15000
306	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	-	-	-	-
307	Ապակեվկացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
308	Ապակեվկացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
309	Ապահովիչների փոխարինում	2000	2000	2000	2000
310	Ապակեամբարձիչների փոխարինում	15000	15000	15000	15000
311	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	10000	10000	10000	10000
312	Էլեկտրական տվիչների փոխարինում	5000	5000	5000	5000
313	Էլեկտրական անջատիչների փոխարինում	5000	5000	5000	5000
314	Մարտկոցի փոխարինում	1000	1000	1000	1000
315	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	-	-	-	-
316	Ավտոմեքստորի դրական էլեկտրոլարի փոխարինում	-	-	-	-
317	Ավտոմեքստորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	-	-	-	-
318	Ավտոմեքստայի պեհավաքի փոխարինում	-	-	-	-
319	Ավտոմեքստայի պեհավաքի նորոգում	-	-	-	-
320	է/ կոճակի փոխարինում	-	-	-	-
321	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	-	-	-	-
322	Ջրի ցողիչի փոխարինում	-	-	-	-
323	Բամպերի փոխարինում	-	-	-	-
324	Բամպերի կալունակի փոխարինում	-	-	-	-
325	Բամպերի բալկայի փոխարինում	-	-	-	-
326	Բեռնայնցիկի փոխարինում	-	-	-	-
327	Բեռնայնցիկի փականի փոխարինում	-	-	-	-
328	Բեռնայնցիկի ռետինի փոխարինում	-	-	-	-
329	Դռան պաստառի փոխարինում	-	-	-	-
330	Հագոցի փականի փոխարինում	-	-	-	-
11. Ավտոմեքստայի սրահ					
331	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
332	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-
333	Նստատեղի վերանորոգում	-	-	-	-
334	Սրահի պաստառապատում	-	-	-	-
335	Սրահի ծայրամեկուսացում	-	-	-	-
336	Ապակիների մզեցում	-	-	-	-
337	Դռան փականի փոխարինում	-	-	-	-
338	Բեռնայնցիկի ճոպանի փոխարինում	-	-	-	-
339	Դռների դրսի բռնակ փոխարինում	-	-	-	-
340	Դռների ներսի բռնակ փոխարինում	-	-	-	-
341	Դռների ռետինների փոխարինում	-	-	-	-
342	Դռների ապակիների ռետինների լիծաստեղծում	-	-	-	-
343	Լամպի փոխարինում	-	-	-	-
344	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	-	-	-	-
345	Դիմապակու փոխարինում	-	-	-	-

12. Այլ ծառայություններ					
346	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում <i>գին 1 կտորի համար</i>	-	-	-	-
347	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում <i>գին 1 կտորի համար</i>	-	-	-	-
348	Եռակցման աշխատանքներ <i>գին 1տմ (գծ.մ) համար</i>	-	-	-	-
349	Խառատային աշխատանքներ <i>գին 1 կտորի համար</i>	-	-	-	-
350	Փականագործական աշխատանքներ <i>գին 1 ժամ աշխատանքի համար</i>	-	-	-	-
351	Ավտոմեքենայի լվացում	-	-	-	-
352	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	-	-	-	-
353	Լոջեր վառ ուսուցիչ անվաթացքի խառատում	-	-	-	-
354	Անիվի հանում և տեղադրում	-	-	-	-
355	Անվադողի վերանորոգում	-	-	-	-
356	Անիվի բալանավորում	-	-	-	-
357	Անիվի վալց	-	-	-	-
358	Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում	-	-	-	-
359	Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ, համար</i>	-	-	-	-
360	Ավտոմեքենայի հագոցի փոխարինում	-	-	-	-
361	Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում	-	-	-	-
362	Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում	-	-	-	-
363	Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում	-	-	-	-
364	Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում	-	-	-	-
365	Ավտոմեքենայի դռան փոխարինում	-	-	-	-
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 I 700 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՄԻ 035 LL 55 Թողարկման տարեթիվը՝ 2014թ	ՏՈՅՈՏԱ ՔԵՄՄԻ 460 LL 60 Թողարկման տարեթիվը՝ 2009թ	<<Հյունդայի Մոնատա>> 606LL60 Թողարկման տարեթիվը՝ 2010թ
1.Շարժիչ					
1	Շարժիչի բլոկ	-	-	-	-
2	Շարժիչի գլխիկ	-	-	-	-
3	Բարձիկ	35000	25000	25000	25000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	27000	25000	25000	25000
5	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	150000	85000	85000	85000
6	Շարժիչի փական դուրս մղող	7000	5000	5000	5000
7	Շարժիչի փական ներս մղող	7000	5000	5000	5000
8	Շարժիչի փականի խտաբուկ	2000	1000	1000	1000
9	Փականի զսպանակ	5000	5000	5000	5000
10	Ծնկաձև լիսեռ	-	-	-	-
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	10000	5000	5000	5000
12	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	15000	10000	10000	10000
13	Ծնկաձև լիսեռի արձատական ներդիրներ	10000	8000	8000	8000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	10000	8000	8000	8000
15	Մխոց	20000	15000	15000	15000
16	Մխոցային օղակներ	50000	35000	35000	35000
17	Մխոցային մատ	45000	45000	45000	45000
18	Ատամնանիվ	45000	40000	40000	40000
19	Շարժիչի շղթա	60000	60000	60000	60000
20	Շարժիչի պաշտպանիչ	-	-	-	-
21	Փոկի ձգիչ	25000	25000	15000	15000
22	Հիդրոձգան	5000	5000	5000	5000
23	Հրիչ	-	-	-	-
24	Շարժիչի հիդրոհրիչ	-	-	-	-
25	Շարժիչի հանդարտիչ	25000	15000	15000	15000
26	Շարժիչի հղովակ	-	-	-	-
27	Շարժիչի հղովակի առանցքակալ	5000	5000	5000	5000
28	Շարժիչի առջևի կափարիչ	-	-	-	-
29	Շարժիչի վերևի կափարիչ	-	-	-	-
30	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	15000	10000	10000	10000
31	Թափանիվ	--	-	--	-
32	Շարժաթև	-	-	-	--
33	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	-	-	-	-
34	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	-	-	-	--
35	Փոկանիվ ծնկաձև լիսեռի	-	-	-	-
36	Փոկանիվ	-	-	-	-
37	Սուխարիկ փականի	-	-	-	--

38	Գլխիկի բոլո	-	--	-	-
39	Ծնկածն լիսեռի բոլո	-	-	-	--
40	Պարկուճ (չՌսՖՁՐ)	-	-	-	-
41	Քարտեր	-	-	-	-
42	Պատյան ատամնավոր փոկի	-	-	-	-
43	Փական յուղի տարայի	-	-	-	-
44	Խուփ ընդարձակման բաքի	-	-	-	-
45	Խուփ շարժիչի	-	-	-	-
46	Թաթիկ յուղի մղիչի	-	-	-	-
47	Բարձիկ փ/տուփի	-	-	-	-
48	Յուղի մղիչ	-	-	-	--
49	Միջադիր յուղի մղիչի	-	-	-	-
50	Յուղի ծորակ	-	-	-	-
51	Շարժիչի յուղի արանքաչափիչ	-	-	-	--
52	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	-	-	-	-
53	Կախույրի միջադիր	-	-	-	--
54	Քարտերի միջադիր	-	-	-	-
55	Շարժիչի բաշխիչ լիսեռ	-	-	-	--
56	Բ/լիսեռի կափարիչ	-	-	-	-
57	Բ/լիսեռի խտաբուկ	-	-	-	-
58	Շարժիչի ք/լիսեռի ականոց	-	-	--	-
59	Շարժիչի ք/լիսեռի երիթակ	-	-	-	-
60	Ուղղորդիչ վճան	-	-	-	-
61	Շարժիչի գամասեղ	-	-	-	-
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
62	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3000	3000	3000	3000
63	Յուղ շարժիչի կիսափնթետիկ, 1 լիտր	7000	5000	5000	5000
64	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	7000	7000	7000	7000
65	Յուղման համակարգի վազման հեղուկ 1 լիտր	1500	1500	1500	1500
66	Յուղի գտիչ	2000	2000	2000	2000
67	Յուղի ջաղիատոր	-	-	-	-
68	Վառոցքի կոճ	10000	10000	10000	10000
69	Արտածման կալեկտոր աջ	-	-	-	-
70	Արտածման կալեկտոր ձախ	-	-	-	-
71	Ներածման կալեկտոր աջ	-	-	-	-
72	Ներածման կալեկտոր ձախ	-	-	-	-
73	Արտածման կալեկտորի աջ միջադիր	10000	5000	5000	5000
74	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	10000	5000	5000	5000
75	Ներածման կալեկտորի աջ միջադիր	10000	5000	5000	5000
76	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	10000	5000	5000	5000
77	Վառոցքի մոճ	5000	5000	5000	5000
78	Բենզոլաբաքի բենզոլիչի ցանց	2000	2000	2000	2000
79	Բենզոլիչ	15000	15000	15000	15000
80	Բենզոլաբաք	-	-	--	-
81	Կարբոլաատոր	-	--	-	--
82	Կարբոլաատորի լրակազմ	-	-	-	--
83	Ինժեկտորի բոցամուղ բենզոլով շարժիչի	5000	5000	5000	5000
84	Բոցամուղի խտաբուկ	-	-	-	-
85	Վառելանյութի մղիչ էլեկտրական	20000	20000	20000	20000
86	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	7000	7000	7000	7000
87	Վառելիքի կոշտ մաքրման գտիչ	8000	8000	8000	8000
88	Վառելանյութի խողովակ	-	-	-	-
89	Օդի գտիչ	5000	5000	5000	5000
90	Օդի ծախսաչափիչ	80000	80000	80000	80000
91	Օդի գտիչի փողոկակ	-	-	-	--
92	Ջերմաստիճանային տվիչ	-	-	-	-
93	Յուղի տվիչ	5000	5000	5000	5000
94	Բաշխիչ լիսեռի տվիչ	-	-	-	-
95	Օդի ծախսի տվիչ	-	-	-	--
96	Արագաչափի տվիչ	-	-	-	-
97	Հովհարի տվիչ	-	-	-	-
98	Ջրի խողովակ երկար	-	-	--	-
99	Ջրի խողովակ կարճ	-	-	-	-
100	Ջրի տվիչ	-	-	-	-
101	Բենզոլաբաքի տվիչ	-	-	-	-
102	Մարման ընթացքի կարգավորիչ	-	-	-	-
103	Ղեկավարման համակարգիչ	-	-	-	-
104	Պարապ ընթացքի տվիչ	15000	15000	15000	15000
105	Թթվածնի տվիչ	-	-	-	-
3. Սառեցման և արտածման համակարգ					
106	Հովհար	-	-	-	-

107	Հովհարի շարժիչ	-	-	-	-
108	Հովհարի թևանիվ	-	-	-	-
109	Ուղիատոր	80000	80000	80000	80000
110	Ընդարձակող բաքի փակվան	-	-	-	-
111	Ընդարձակող բաքի փողրակ	-	-	-	-
112	Ընդարձակող բաք	-	-	-	-
113	Ուղիատորի փողրակ ներքևի	-	-	-	-
114	Ուղիատորի փողրակ վերևի	-	-	-	-
115	Թերմոստատ	10000	10000	10000	10000
116	Ջրի նդիչ	-	-	-	-
117	Ջրի նդիչի միջադիր	-	-	-	-
118	Ջրի պոմպի խտաբուկ	-	-	-	-
119	Ջրի պոմպի առանցքակալ	-	-	-	-
120	Ջրի պոմպի թևակ	-	-	-	-
121	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000	2000	2000	2000
122	Չսառչող հեղուկ ապակիների համար				
123	Ձգիչ հողվակի				
124	Փոկ մեծ				
125	Հովացման համակարգի ռետինե խողովակ				
126	Ծղրակ				
127	Փոկանիվ գեներատորի փոկի				
128	Միջադիր թերմոստատի				
129	Խլարարի ներդիր				
130	Խլարարի կախոց				
131	Խլարարի խողովակ				
132	Կրոնշտեյն				
133	Խլարարի անուր (խամուտ)				
134	Խլարար				
135	Շարժիչ վառարանի				
136	Վառարանի ջաղիատոր				
4. Կցորդում և ՓՏ					
137	Կցորդման աշխատանքային գլան				
138	Կցորդման գլխավոր գլան				
139	Կցորդման գլխավոր գլանի կալունակ				
140	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու				
141	Կցորդման սեղմող սկավառակ				
142	Կցորդման տարվող սկավառակ				
143	Կցորդման առանցքակալ				
144	Կցորդման ոտնակ				
145	Կցորդման ճոպան				
146	ՓՏ-ի յուղ				
147	ՓՏ-ի պատյան				
148	ՓՏ-ի առջևի խտաբուկ				
149	ՓՏ-ի հետևի խտաբուկ				
150	Վազբաչափի շարժաբեր				
151	ՓՏ-ի առանցքակալ				
152	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկնոց				
153	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ				
154	ՓՏ-ի առաջնային լիսեռ				
155	ՓՏ-ի երկրորդային լիսեռ				
156	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ				
157	ՓՏ-ի երկժամի				
158	ՓՏ-ի ատամնանիվ				
159	Համաժամիչ				
160	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ				
161	Հերմետիկ				
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
162	Բաշխիչ տուփ				
163	Բաշխիչ տուփի խցուկ				
164	Բաշխիչ տուփի առանցքակալ				
165	Բաշխիչ տուփի ատամնանիվ				
166	Բաշխիչ տուփի լիսեռ				
167	Կարդանային լիսեռ				
168	Էլաստիկ մուֆտ				
169	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ				
170	Կարդանային լիսեռի խաչուկ				
6. Առջևի և հետևի կամրջակներ					
171	Հետևի կամ առջևի կամրջակ				
172	Ռեդուկտոր				
173	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ				

174	Ղիֆֆերենցիալ			
175	Ղիֆֆերենցիալի սատելլիտ			
176	Տանող ատամնանիվի խցուկ			
177	Տանող ատամնանիվի առանցքակալ			
178	Ղիֆֆերենցիալի առանցքակալ			
179	Չախ կամ աջ կիսաստնու փոշեթիկմոց			
180	Կիսաստնի			
181	Կիսաստնու առանցքակալ			
182	Կիսաստնու միջադիր			
183	Կիսաստնու խցուկ			
184	Կարգավորիչ տափողակ			
7. Կախոց				
185	Տրավերս			
186	Կրոնշտեյն			
187	Աջ կամ ձախ հողակալ			
188	Անվակունդ			
189	Անվակունդի խցուկ			
190	Անվակունդի ներքին առանցքակալ			
191	Անվակունդի արտաքին առանցքակալ			
192	Հետևի անվակունդի առանցքակալ			
193	Հարվածամեղմիչի թասակ			
194	Զսպանակ			
195	Առջևի հարվածամեղմիչ			
196	Հարվածամեղմիչի փոշեթիկմոց			
197	Հարվածամեղմիչի վրան			
198	Ներքևի լծակ			
199	Ներքևի լծակի վրան			
200	Վերևի լծակ			
201	Շկվոռնի			
202	Ռեզրավոյ			
203	Վերևի լծակի վրան			
204	Գնդե հողակալ			
205	Առջևի կայունարար			
206	Առջևի կայունարարի վրան			
207	Առջևի կայունարարի կանգնակ			
208	Հետևի զսպանակ			
209	Ճոճանակային լծակ			
210	Ճոճանակային լծակի վրան			
211	Հետևի ցնցամեղմիչ			
212	Հետևի մետաղածող (շտանգա)			
213	Հետևի մետաղածողի (շտանգա) վրան			
214	Հետևի անկյունագծային լծակ			
215	Անկյունագծային լծակի վրան			
216	Զսպակ (ռեստորա)			
217	Զսպակի վրան			
218	Զսպակի միջադիր			
219	Զսպակի բռնիչ			
220	Աջ կամ ձախ ծգան			
8. Ղեկային մեխանիզմ				
221	Ղեկային կալուն			
222	Ղեկային կալունի առանցքակալ			
223	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ			
224	Ղեկային կալունի խաչուկ			
225	Հիդրոուժեղարարի փուկ			
226	Հիդրոուժեղարարի պոմպ			
227	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ			
228	Ձգան մեջտեղի			
229	Ղեկային ծող			
230	Ղեկային ծողի ծայրակալ			
231	Հիդրոուժեղարարի յուղ, չիտոլ			
232	Ճոճանակ			
233	Ճոճանակի վրան			
9. Արգելակային համակարգ				
234	Գլխ. գլան			
235	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ			
236	Վակուումային ուժեղարար			
237	Բանվ. գլան			
238	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ			
239	Արգելակային փողոակ			
240	Սուպպորտ			
241	Արգելակային հեղուկ			

274	Էլեկտրական տվիչ				
275	Տախտմետր				
276	Ապակեմաքրիչ	3500	3500	3500	3500
277	Բռնկման կողպեք				
278	Էլեկտրալարերի գլխավոր խուրց				
279	Էլեկտրալարերի երկրորդային խուրց				
280	Վառոցքային լարերի խուրց				
281	Վառոցքի մոմի ծայրակալ				
282	Վազբաչափ				
283	Վազբաչափի ճոպան				
284	Ղռան կողպեք				
285	Ազդանշան				
286	Ապակեվվացիչի բաշուկ	35000	35000	35000	35000
287	Ապակեվվացիչի շարժիչ				
288	Ղռների կենտրոնական փական				
289	Հայելի կողային				
290	Ազդանշանային համակարգ				
291	Ղռան ապակու ամբարձիչ				
292	Ղռան ապակու էլեկտրամարձիչի շարժիչ				
293	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի կերանդոզման համար				

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

3. Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:

4. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 20 և ավելի ավտոմեքենայի համար:

5. Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ»

		Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		153000	153000	306000	306000	306000	459000	459000	459000	612000	612000	612000	612000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ»

ք.Հրազդան, Կենտրոն

ՀՎՀՀ 03014577

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
 900121120050

ՀՀ Կոտայքի մարզպետարանի
 գլխավոր քարտուղար՝ Լ. Պետրոսյան



 /ստորագրություն/
 Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԱԶ Սայադ Սայադյան

ք. Հրազդան, Անդրանիկի պողոտա 18

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Հ/Հ 163158122867

ՀՎՀՀ 40518322

Տնօրեն՝ Ա.Սայադյան

 /ստորագրություն/
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ամսական կացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն